## Բ. - ՏԱՐԵՑՈՅՑՆԵՐ և ՏԱՐԵԳՐՔԵՐ

ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑ, *խմբ. Սիմոն Գաբամաճեան*, Կ. *Պոլիս*, 1920 - (*կը շարունակուի*)։

ԵՐԵՒԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑԸ, Կ. *Պոլիս*, 1920։

«ԺԱՄԱՆԱԿ»Ի ՏԱՐԵԳԻՐՔԸ, Կ. *Պոլիս*, 1927։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ, *Զարդարեան*, Կ. *Պոլիս*, 1907 - 8։

ԽՐԱԽՃԱՆՔԻ ՏԱՐԵԳԻՐՔԸ, *հրատ. Զ. Արշակ*, Կ. *Պոլիս*, 1931 - 1932։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ, *խմբ. Ղեւոնդ Քահանայ Փափազեան*, *Կալաց*, 1895 - 1899 (*հայերէն և ռումաներէն լեզուներով*)։

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՏԱՐԵՑՈՅՑԸ, Կ. *Պոլիս*, 1926-7։

ՀՈՍՀՈՍԻ ՏԱՐԵՑՈՅՑԸ, *խմբ. Փ. Գոլանճեան*, Կ. *Պոլիս*, 1914։

ՄԱՍԻՍ ՏԱՐԵԳԻՐՔ, *խմբ. Արմ. Սեւան*, *Սոֆիա*, 1934 (*ելած է և 1935ին*)։

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՏԱՐԵՑՈՅՑԸ, Կ. *Պոլիս*, 1914։

ՊՈՒԿԼԱՐԱՀԱՅՈՒՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ, *խմբ. Սիմոն Էքմէքճեան*, *Սոֆիա*, 1919։

ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ, Կ. *Պոլիս*, 1914, 1918 - 1921։

ՏԱՐԵՑՈՅՑ ԽԻԿԱՐԻ, *խմբ.* Կ. *Պոլիս*, 1888։

ՏԱՐԵՑՈՅՑ ՄԱՍԻՍ, *խմբ. Հ. Մ. Պոտուրեան*, *Պուքրէշ*, 1923։

## Գ. — ՀԱՅԱՏԱՌ - ԹՈՒՐՔԵՐԷՆ ԹԵՐԹԵՐ

ԱՅՆՆԷԻ ԼԷԹԱՅԻՖ, *զաւեշտաթերթ*, *Վառնա* (*իբր Յաւելուած «Հայելի»ի*)։

ԵԷՆԻ ԷՕՄՐ, *խմբ. Պատ. Յ. Նաճարեան*, *Այնթապ*, 1911։

ՀԱԳԻԳԱԹ, *հրատ. Խարալամպոս Պոսթանճըօղլու*, *Այնթապ*, 1914։

ՃԷՐԻՏԷԻ ԹԻՃԱՐԷԹ, Կ. *Պոլիս*, 1857-8։

ՃԷՐԻՏԷԻ ՀԱԳԻԳԱԹ, Կ. *Պոլիս*։

ՃԻՀԱՆ, *շաբաթաթերթ*, *խմբ. Տիրան Քէլէկեան*, Կ. *Պոլիս*. 1884, 32 *թիւ*։

ՄԵՆՏՈՐ (*Մէճմուայի Մէպահիսի Միւֆիտէ*), Կ. *Պոլիս*, 1886։

ՄԷՃՄՈՒԱՅԻ ԳԱՎԱՆԻՑՆ, *հրատ. Գ. Գըլըճեան*, Կ. *Պոլիս*, 1868։

ՄԷՃՄՈՒԱՅԻ ՖԻՆՈՒՆ, Կ. *Պոլիս*, 1863, 1 *թիւ*։

ՄՈՒՍԱՎՎԷՐԻ ՃԻՀԱՆ (*եռամսեայ*), *խմբ. Տ. Քէլէկեան*, Կ. *Պոլիս*, 1885, 1 *թիւ*։

ՆԷՃԱԹԸ ՄԻԼԼԷԹ, *հրատ. Ա. Մատթէոսեան* Կ. *Պոլիս*, 1908 - 1909։

ՇԱՐԺՈՒՄ ԻԼԱՎԷՍԻ, (*շաբաթաթերթ*), *Վառնա*, 1901, 10 *թիւ* (*Յաւելուած «Շարժում»ի*)։

ՊՕՇ ՊՕՂԱՋ ՊԻՐ ԱՏԷՄ (*երգիծաթերթ*) *խմբ. Յ. Վարդան Փաշա*, Կ. *Պոլիս*, 1852, 1 *թիւ*։

ՐՈՒԶՆԱՄԷԻ ՄԱՍԻՍ, Կ. *Պոլիս*, 1876։

ՆԷՎՍԱԼԸ ԷՐՄԷՆԵԱՆ (*Տարեցոյց*) *խմբ. Վարժապետեան*, Կ, *Պոլիս*, 1912-1914։

*Անշուշտ այս և ասոնց նման պակասներէն շատեր գոյութիւն չէին ունենար՝ եթէ Գ. Լեւոնեան կապ հաստատած ըլլար արտասահմանեան մեր գրական կարեւոր կեդրոններուն հետ կամ գոնէ ապահովէր իրեն աշխատակիցներ։*

*Հակառակ այս անխուսափելի թերիներուն սակայն, որոնց մէկ մասը կը ճշան անկախ իր կամքէն, «Հայոց Պարբերական Մամուլը» կը հանդիսանայ պատուաբեր աշխատութիւն մը, մասնաւորաբար իբր ցուցակագրութիւն ըլլալով ամենաճոխը՝ զինքը կանխող բոլոր նման հրատարակութեանց մէջէն։*

ՆԵՐՍԷՍ ԳԱՍՍԱՊԵԱՆ

*Ֆիլիպէ*

---

ԾԱՆՕԹ. ԽՄԲ. — *Խոր գնահատանքի զգացումին հետ որ ունինք հանդէպ «Հայոց Պարբերական Մամուլը - Լիակատար ցուցակ Հայ Լրագրութեան» հեղինակ Գարեգին Լեւոնեանի իր թանկագին գործին համար, ի սրտէ խնդակից ենք նաեւ թերթիս թղթակից Պրն. Ներսէս Գասապեանի որ առանց ազգային մեծ գրատուններ ունենալու իր տրամադրութեան տակ, օրինակելի ջանասիրութեամբ յաջողած է յիշեալ գործին վրայ կատարել այնպիսի սրբագրութիւններ և յաւելումներ որ կը հետաքրքրեն ամբողջ Հայ գրական աշխարհը։*

*Մենք ալ մեր կարգին մեր համեստ բաժինը պիտի բերենք սրբագրութեան ինչ ինչ կէտերու, բայց մանաւանդ յաւելուածով մը բազմաթիւ թերթերու՝ մեծամասնութիւնը վանքիս Հայ լրագրական հաւաքածոյէն, անուններ՝ որոնք կը պակսին Պրն. Լեւոնեանի Լիակատար ցուցակին մէջ։*

*Տեղւոյ անձկութեան պատճառաւ զայն կը հրատարակենք թերթիս յաջորդ թուին մէջ։*



# Ա. - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ԲԱՐԻԶ

Այս *տարի Յուլիս 11ի կիրակին, Մուրատեան Վարժարանի «Պէշիկթաշլեան» թատերասրահին մէջ տարեկան հունձքի խանդավառ տօնն էր ու միանգամայն հանդիսաւոր փակումը հարիւրամեայ յոբելեանի այն շքեղ և պատուաբեր տօնախմբութեանց՝ որոնց գլուխն անցած Ֆրանսական Ակադեմիան և Բարիզի քաղաքապետութիւնը՝ հոգեկան այնքան հրճուանք պատճառեցին ամենուս, այնքան փառքեր արձանագրեցին ազգանուէր վարժարանին ոսկեմատեանին մէջ՝ ի պարծանս Հայ ազգին։*

*Հանդէսներուն բացառիկ փայլ կ'աւելցնէր Մխիթարեան Ուխտիս Ընդհ. Աբբահայրը՝ Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան՝ վարժարանին երբեմնի վաստակաւոր ուսումնապետը, որուն հետ այդ օրը հանդիսին կը նախագահէր՝ իբր Ֆրանսական Պետութեան ներկայացուցիչ՝* Henry Bordeaux, *ֆրանսական կաճառին պատկառելի անդամը, այսպէս իր անունը կցելով Լամարթինի ու Վիկտոր Հիւկոյի անմահ անուններու շարքին՝ Մուրատեան Վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսներու նախագահներուն։*

*Բեմին վրայէն սաներու հոծ խումբը*



*(Նախագահները և հիւրերը դէպ ի հանդիսավայր երթալով)*

*Կեդրոնը.* ՀԱՆՐԻ ՊՈՐՏՈՅ՝ *իր աջ կողմը ունենալով իր դուստրը* ՓՕԼ Հ. ՊՈՐՏՈՅ - ՄԱՍՔԼԱՐԻ *և իր այրը — ձախ կողմը.* ԳՆՐԳ. ՍՐԱՊԻՈՆ ԱԲԲԱՀԱՅՐ ՈՒԼՈՒՀՕՃԵԱՆ — *Մնացածները ձախէն աջ.* ՏԻԿԻՆ ԱՐՇԱԿ ԽԱՆ — ՊՐՆ. Մ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ — ԳՆՐ. ԱՐՇԱԿ ԽԱՆ — ՀՐԱՄ. Զ. ԽԱՆՁԱՏԵԱՆ — Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ՝ *Մեծաւոր*, Հ. ՍԱՀԱԿ Վ. ՏԷՐ - ՄՈՎՍԷՍԵԱՆ՝ *Տեսուչ*

digitised by A.R.A.R.@

նորօրինակ խանդով ու թափով երգեց նախ Մարսէյեզն ու Բամ փորոտանը. ապա Հրամանատար. Զատիկ Խանզատեան՝ վարժարանին քաղաքական տեսուչը՝ համառօտիւ ակնարկեց, ֆրանսերէն, յոբելինական տօնախմբութեանց մեծ յաղթանակները, և վարժարանին ուսումնական և կրթական տարեկան յաջողութիւնները և քննութեանց արդիւնքները, շնորհակալութիւն յայտնելով Ֆրանս. Պետութեան Բարիզի Քաղաքապետութեան, Հանդէսի նախագահներուն, դպրոցի բարեկամներուն և բոլոր ներկաներուն:

Ապա իր շնորհալի ոճով Ակադեմիկոս Հանրի Պորտոյ կուռ բանախօսութեամբ մը պատկերացուց վարժարանին անցեալը՝ նախկին և այս վերջին շրջանին, Յոբելեանի փառքերը, իր համակրութիւնն և սէրը, մշակութային և կրթական բարձր դերը զոր կը կատարէ Մխիթարեան Միաբանութիւնը այդ վարժարանով յօգուտ Հայ ազգին և յօգուտ Արեւմտեան և յատկապէս Ֆրանս. քաղաքակրթութեան և լեզուի ծաւալումին:

Ապա Վարժարանին Ուսումնապետը՝ Հ. Վահան Վ. Յովհաննէսեան տարեկան ամփոփ տեղեկատուութիւնն ըրաւ.

«Ահա իններորդ տարին է որ կը բոլորենք մեր վարժարանի վերաբացման, յետ ութնամեան աշխատանքի՝ հնձելու լաւագոյն արդիւնքներ այս մտաւոր անդաստանին մէջ. ուրախ եմ յայտարարելու որ ամէնքս ալ հաւասար կրնանք ցնծալ:

Այս մտաւոր կեդրոնը ոչ միայն օրը օրին ազգային հպարտութիւնը կը դառնայ, այլ նաեւ օտարներուն ալ մասնաւոր դուրգուրանքին և համակրանքին կ'արժանանայ:

Անշուշտ կը զգաք թէ ներկայ քաղաքական և նիւթական ծանր պայմաններուն տակ որքան զոհողութիւն, որքան կորով պէտք է մեզի պէս հալածական ազգի մը զաւակներուն պահելու այսպիսի հաստատութիւն մը Ֆրանսայի նմանօրինակ հիմնարկութիւններու կողքին հաւասար փայլով, արդիւնքներով: Այդ զոհողութիւնն և տաժանակիր աշխատանքը Մխիթարեան Միաբանութիւնը սիրով ստանձնած է, հաստատուն հաւատքով լծուած նոր բարգաւաճումին՝ հակառակ որ մինակ է իր վերածնող գործին մէջ:

Ժամանակները հրամայական են, ապազգայնացման սպառնալիքը դամոկլեան սուրի պէս կախուած է այս ցեղին գլխուն. պէտք է լծուինք աշխատանքի, պէտք է բոլորուինք այս հաստատութեան շուրջը, հոս առաջնորդել մեր սքանչելի զաւակները, որպէս զի գիտութեան հետ ազգային վառ հոգին զգենուն իբրեւ զրահ մը բոլոր օտարացուցիչ վտանգներուն դէմ:

Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու 100-ամեայ յոբելեանը որ այնքան շքեղօրէն տօնուեցաւ, անշուշտ ակնբախ գրաւական մ'է թէ որքան հին փորձառութիւն կը վարէ Մխիթարեան Հաստատութիւնները երբեմն հաւասար և յաճախ գերազանց հանդիսանալով քաղաքակրթուած ազգերու մէջ: Արդար է որ, սիրելի հայրենակիցներ, մենք ալ հպարտ ըլլանք մեր փառքով, մեր անունով:

Մրցանակները բաշխելու անցնելէ առաջ հաճելի է յայտարարել արդէն հասարակութեան՝ թէ այս տարի հինգ աշակերտ պետական քննութիւններն յաջողութեամբ անցուցին (bachelier) որոնցմէ մին ստացաւ բարձրագոյն նիշը (mention très bien) և միւսներն արժանանալով քննիչ յանձնախումբին մասնաւոր գնահատանքին:

Այս տարուան արձանագրուած աշակերտներուն թիւը 94 էր, անցեալ տարուան 75ի փոխարէն: Աշակերտներու ուսումնական և կարգապահական հոգը Տեսչութեան յատուկ խնամքին առարկան եղած է: Ուսմանց մասն ստանձնած են 21 ուսուցիչներ, որոնց 11ը Ֆրանսացի՝ Բարիզի լաւագոյն ուսուցիչներէն ընտրուած:

Խորին շնորհակալութեամբ ամենուդ ջերմ գնահատումին կը յանձնեմ այն օտար և ազգային մարմիններն ու անհատները՝ որոնք ամէն տարի մասնաւոր դուրգուրանքով կը քաջալերեն մեր աշակերտները ուսման և բարեկրթութեան մէջ՝ անոնց թանկագին մրցանակներ սահմանելով:

Մեր առաջին շնորհակալութիւնը՝ Մխիթ. Ուխտիս Գերպ. Աբբահօր որ իր բարձր ներկայութեամբը կը պատուէ մեր հանդէսը, սահմանելով բարի վարքի համար ոսկի մետալներ: Շնորհակալութիւն Հրամանատար Պ. Զատիկ Խանզատեանի՝ մեր քաղաքական անխոնջ և անձնուէր տեսչին, որ ոչ միայն Յոբելինական հանդէսները շքեղօրէն փայլեցուց, այլ նաեւ բազմաթիւ նուէրներով կը վարձատրէ իր սաները:



ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ
ԵՒ ՆՈՐ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ (Դ.)

Առջեւի կարգ. կեդրոնը. — ԳՆՐԳ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՕՃԵԱՆ, ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ ՄԽԻԹ. ՈՒԽՏԻՍ[1]

Ձախէն աջ. Հ. ՍԱՄՈՒԷԼ Վ. ԱՐԱՄԵԱՆ, Ուսուցիչ. — Հ. ՎԱՀԱՆ Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, Ուսումնապետ. — ԳՆՐ. Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ, Մեծաւոր. — Հ. ՍԱՀԱԿ Վ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ, Տեսուչ, — Հ. ԵՂԻԱ Վ. ՓԷՋԻԿԵԱՆ[2]. — Հ. ԽԱՉԱՏՈՒՐ Վ. ԿՐԹԱՆԷՍԵԱՆ, Մատակարար.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Միջին կարգ. | | | | | | |
| ԽՈՋԱՄԻՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ | ծնեալ ի | Պաքու | 1920 | մուտքը ի | վրժ. | 1936 |
| ՓԱՓԱԶԵԱՆ ԳԷՈՐԳ | » | » Ժընեւ | 1921 | » | » | 1932 |
| ԼԻԱՆՈՋՈՖ ՆԻՔՈԼԱ | » | » Սլաւեանսք | 1920 | » | » | 1930 |
| ՔԱՏՐՃԵԱՆ ՆՈՒՊԱՐ | » | » Էսկիշէհիր | 1919 | » | » | 1929 |
| ՏԱՆՏԻԿԻՆԵԱՆ ԼԵՒՈՆ | » | » Նիկոմիդիա | 1921 | » | » | 1932 |
| ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ | » | » Զմիւռնիա | 1920 | » | » | 1934 |
| ՏԱՐՕՆԵԱՆ ՀՐԱՉ | » | » Տէմոթիքա | 1917 | » | » | 1933 |
| Եռեւի կարգ. | | | | | | |
| ՏԱՊԱՂԵԱՆ ԱՐՄԷՆ | » | » Կ. Պոլիս | 1921 | » | » | 1932 |
| ՍԱՐԱՃԵԱՆ ԱՐՄԷՆ | » | » Բարիզ | 1920 | » | » | 1930 |
| ՎԱՖԻԱՏԻՍ ՍՈԿՐԱՏ | » | » Կ. Պոլիս | 1919 | » | » | 1933 |
| Բացակայ. | | | | | | |
| ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՀԱՅԿ | » | » Մարսիլիա | 1929 | » | » | 1932 |

1 – 2. Գերպ. Աբբահայրն և Հ. Ե. Փ. հոն կը գտնուէին Հարիւրամեակի տօնախմբութեանց առթիւ:



digitised by A.R.A.R.@

Շնորհակալութիւն «Ալլիանս Ֆրանսէզ»ին, Իտալական կառավարութեան, և յանուանէ իր ընդհանուր հիւպատոսին՝ Պրն. Լ. Մաքոթայլին, Հ. Բ. Ը. Միութեան, Մուրատ–Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան, Վարժարանիս Բարեկամաց միութեան, «Բազմավէպ»ի խմբագրութեան, Օր. Կարտիներսի: Մանաւոր խորին շնորհակալութիւն մեր Թանկագին բարեկամ Պրն. Երուանդ Պարկըրճեանի իր աժէքաւոր նուէրներուն համար. Նոյնպէս Պրն. Հրանտ Սամուէլի և Տօքթ. Ալլահվերտիի»:

Ապա տուաւ 11 շրջանաւարտներու անունները՝ որոնք հանրութեան ուրախակից ծափերուն մէջ Վարժարանին վկայականն ստացան Պրն. Հ. Պորտոյի ձեռքէն և անոր ստորագրութեամբ: Յաջորդաբար յայտարարեց մրցանակի արժանացողներու անունները՝ որոնցմէ յիշենք գլխաւորապէս՝ շրջանաւարտներէն՝ Ն. Ջարճեան՝ ոսկի մետալ բարի վարքի՝ նուիրուած Մխիթարեան Ուխտիս Ընդհ. Աբբահօր կողմէն. – Ա. Տապաղեան՝ Նախկին աշակերտաց Ա. նուէրը. – Հ. Տարօնեան՝ Հայերէն լեզուի Ա. մրցանակ:

Յաջորդ դասերէն՝ արժանացան բարի վարքի Բ. մրցանակի՝ Բ. Ուզունեան – Գ. Մրցանակի՝ Գ. Գէորգեան:

Ընդհանուր Ուսմանց մրցանակի արժանացան մէն մի դասարանի երեք Առաջին հանդիսացողները՝ հետևեալ կարգով.

Բ. ԴԱՍԷՆ. – Փօղոսեան Ստեփան.
Գ. ԴԱՍԷՆ. – Սիւրմէնեան Ժիրայր – Ուզունեան Քրիստափոր – Այտընեան Եփրեմ.
Դ. ԴԱՍԷՆ. – Փօզանեան Վարուժան, Յարութիւնեան Սեպուհ – Այանեան Գէորգ.
Ե. ԴԱՍԷՆ – Քէօսէեան Հրանդ – Մալումեան Միհրան – Խաչատուրեան Վաղարշ.
Զ. ԴԱՍԷՆ. – Փափազեան Գրիգոր – Գազանճեան Կարպիս – Զատիկեան Գալուստ.
Է. ԴԱՍԷՆ. – Ուզունեան Վարուժան – Գաբրիէլեան Նուրհան – Միքայէլեան Հայկ.



Մուրատեան վարժարանի աշակերտութիւնն և Տեսչական և Ուսուցչական մարմինները (1936–1937)



Հանդէսին միջանկեալ երգերը միաձայն և բազմաձայն՝ շնորհիւ Ուսուցիչ Գ. Մ. Ալէմշահի ջանքերուն՝ մեծ յաջողութեամբ երգուեցան աշակերտներու խումբէն, ինչպէս Կարա–Մուրզայի՝ «Բեզի մեռնիմ»ը և «Վարդ կօշիկս» (հայերէն), Պիզէի՝ «Առլէզիէն» (ֆրանսերէն), Ճ. Մերքանթիի «Պարքարոլա» (իտալերէն), և Հէյրիսընի՝ ժողովրդական երգ մը (անգլիերէն):

Բաց ի հայերէն–ֆրանս–իտալ–անգլիերէն գեղեցիկ արտասանութիւններէ զորս կատարեցին ընտիր առոգանութեամբ և խանդով զանազան աշակերտներ, յիշելու ենք նախ շրջանաւարտ Ա. Տապաղեանի հայերէն ազնիւ խօսքերը հրաժեշտի՝ խառն մելամաղձութեամբ ու բաբախուն երախտագիտութեամբ, հանդէպ այն կրթարանին ու վաստակաւոր Մխիթարեան Հայրերուն՝ որոնք կազմած էին աշակերտներուն մէջ բարոյական մարդն ու գիտակից հայը. ազնիւ խոստումներ ըրաւ զայն պահելու և զարգացնելու յարատեւութեամբ կեանքի ասպարէզին մէջ՝ որ իրենց առջեւ կը բացուէր խառն հմայքի և դժուարութեանց հեռապատկերով:

Նոյնքան օծուն էին և գրական յատուկ շունչով և փայլով և ընտիր ֆրանսերէնով՝ Ա. Ստեփանեանի հրաժեշտի ողջոյնը իր Վարժարանին ու Դաստիարակներուն՝ դպրոցական կեանքի սրտագրաւ վերյիշումներով և գեղեցիկ վերլուծումներով: Երկուքն ալ հասարակութեան ջերմ ծափերուն արժանացան:

Ապա Գերպ. Աբբահայրը հանդէսը կը փակէր ազնուական ու հայրական հուսկբանքով մը, շեշտելով նախ դաստիարակութեան արժէքը և մշակոյթի և զարգացման կարեւորութիւնը Ազգերու գոյութեան և քաղաքակրթութեան մէջ, ուսկից՝ Մխիթարեան Միաբանութեան նիւթական ու բարոյական զոհողութիւնները, որոնց պէտք է աջակցին գիտակից և ազգասէր հայեր՝ վառ պահելու և բազմապատկելու թիւը ազգապահպան հայ կրթարաններուն. հարկ է որ հայ ծնողներ միացնեն իրենց ճիգերը՝ դաստիարակ Վարդապետներուն հետ՝ լրացնելու զաւակներու կրթութեան գործը, «որովհետեւ, ըսաւ նա, կրթուած,
« զարգացած հայ պատանին փառքն է
« ոչ միայն իր ընտանիքին և վարժարա-
« նին, այլ նաեւ իր պատկանած ազգին
« և համօրէն մարդկութեան »:

Ու շարունակեց խօսքը՝ յիշեցնելով ներկայ աշակերտութեան իրենց մեծ բախտը՝ այդ իմաստութեան տաճարին մէջ գտնուելու և առջեւնին ունենալու լուսաւոր շաւիղ մը գծուած «երիցագոյն ընկեր հոյա-
« կապ անձնաւորութիւններէ՝ գրական, գի-
« տական, քաղաքական մարզերուն մէջ...
« Ձեզի կ'իյնայ, ըսաւ, ժառանգորդներն
« հանդիսանալու այդ հսկաներու հոգեկան
« և մտաւոր առաքինութեանց: Ձեզի վի-
« ճակուած է նոր դարագլուխ մը սկսելու
« պարծանքը և անզուգական պատիւը...
« Գիտութիւնը աչքն է բանաւոր մար-
« դուն, ձեր հոգւոյն մէջ ամբարեցէք այդ
« գիտութիւնը, լուսաւորեցէք ձեր աչքերը՝
« աւելի գիտակցաբար կորելու կեանքի
« ուղին, աւելի պայծառ տեսնելու կեանքի
« նպատակը. յիշեցէք որ մեծ դեր մը ունիք
« կատարելիք ձեր հայրենիքին հանդէպ:
« Գիտութեան չափ կարեւոր է բարո-
« յական կրթութիւնը, մոքի զարգացու-
« մէն աւելի անհրաժեշտ է սրտի ազնուու-
« թիւնը: Մուրատեան վարժարանի աշա-
« կերտները հարկ է որ ունենան ամէնուրեք
« ազնուական կենցաղի սեփական կնիքը:
« Ամէն աշակերտ որ Վարժարանի սեմէն
« ներս կը դնէ իր ոտքը՝ երազ մը ունի
« իր հոգւոյն մէջ, ամէն ծնողք յոյսեր ու-
« նի իր կատարելիք զոհողութեան փո-
« խարէն և Տեսչութիւնը Վարժարանին՝
« ակնկալութիւններ իր նուիրումին և ճի-
« գերուն, հարկ է որ արդարացնէք ձեր
« վրայ դրուած այսքան սիրուն յոյսեր:
« Խանդավառ հոգւով գործակցեցէք Ձեր
« կրթութեան գործին և ձեր զարգացման:
« Դուք զաւակներն էք վարժարանին, զա-
« ւակ մը իր տան փառքին և բարձրացման
« կ'աշխատի ամէն զոհողութեամբ, որով-
« հետեւ ընտանիքին փառքը անբաժան է
« իր անձնական փառքէն: Ցոյց տուէք,

digitised by A.R.A.R.@

« բովանդակ ձեր կեանքով, խօսքով գոր-
« ծով և երախտագէտ ընթացքով՝ թէ ստու-
« գապէս արժանաւոր որդիներն էք մեծն
« Մխիթարի և Սամուէլ Մուրատի։
« Հայրական քաջալերի խօսքս կ՚ուղ-
« ղեմ նաև Վարժարանի Տեսչութեան
« վաստակաւոր Հայրերուն, բոլոր սրտով
« խնդակցելով ձեռք բերուած գեղեցիկ
« յաջողութեանց համար, կը մաղթեմ որ
« իրենց աշխատութիւնը և ճիգերը միշտ
« պտղաբերին, ծլին, ծաղկին անկորնչելի
« հունձքերով, ի վարձատրութիւն իրենց
« շռայլած սիրոյն և տքնաջան զոհողու-
« թեանց։
« Ամենախորին շնորհակալութիւններ
« նաև ձեզի, ազնիւ հանդիսականներ, որ
« ձեր ներկայութեամբ և սիրալիր զգա-
« ցումներով քաջալերած էք և կը քաջա-
« լերէք միշտ մեր դաստիարակութեան
« նուիրական գործը։
« Դպրոցական այս նոր դարաշրջանը
« զոր սկսանք, թող նոր արշալոյսներու,
« նորանոր նուաճումներու ասպարէզն ըլ-
« լայ և ազգային ազատագրութեան ուղին»։

ՆԵՐԿԱՅ ՄԸ

# ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎՐԺՐՆ. - ՎԵՆԵՏԻԿ

Յունիս 24ին կը փակուէր վարժարա-
նիս դպրոցական տարեշրջանը Թիէփոլեան
չքնաղ դահլիճին մէջ՝ երգերու և բանախօ-
սութեանց սրտագեղ արտայայտութեամբ,
մտերիմ և տաք մթնոլորտի մէջ։
Հրաւիրեալներու պատուաւոր աթոռնե-
րուն վրայ տեսանք ներկայացուցիչները
ծովային Հրամանատարութեան, Գաւա-
ռային Կուսակալին, Ուսմանց Պետական
վերահսկիչին, տեղւոյս բարձրագոյն վար-
ժարաններու տեսչութեանց, յետոյ Ֆրան-
սական հիւպատոսը, Ս. Մարկոսի Գրատան
և վենետկեան գաւառներու գրատուններու
վերին տեսուչը, վարժարանիս ուսուցչա-
կան մարմինը, օտար ու ազգային բարե-
կամներ, Ուխտիս Հայրերն և վանական
աշակերտները, և օրուան պսակաւոր սա-
ներուն ուրախ և յուսալից ծնողները հե-
ռուէն ու մօտէն այդ օրը հոն փութացած,
ինչպէս Միհրանեանները՝ Եգիպտոսէն, Կի-
րակոսեանները Հռոմէն, Սողոյեանը Փա-
րիզէն եւ Մաշենեանները Լիոն ու Պոլսէն...
տուայէն եւն։
Հանդէսին կը նախագահէր Ուխտիս
Ընդհանրական Աթոռակալ Վ. Հ. Ղեւոնդ
Վ. Տայեան։
Խմբերգներու և երաժշտական նուագ-
ներու միջանկեալ պահերուն՝ Մերուժան
Պանչէճեան հայերէն լեզուով, Խաչիկ Տա-
մատեան ֆրանսերէն՝ հրաժեշտի ողջոյն
տուին յուզուած և զգայուն շեշտով, յայտ-
նելով իրենց սէրն ու երախտագիտութիւնը
վարժարանին դաստիարակ Հայրերուն՝ ա-
նոնց այնքան խնամքներուն և զոհողու-
թեանց համար և ամբողջ Մխիթարեան
Միաբանութեան։ Նոյնքան ազնիւ և սի-
րալիր խօսքեր ուղղեցին իրենց ուսուցիչ-
ներուն և Վենետկոյ ասպնջական ու ազնիւ
ժողովրդեան՝ որ իր հարազատ զաւակնե-
րուն կարգին կը սիրէ և կը խրախուսէ
պանդուխտ հայ սերունդները՝ որ կը տա-
նին դէպի բոլոր ազգային կեդրոնները
հայկական սրբազան հուրը և իտալական
ազգի գեղեցիկ մշակոյթն և հոգեկան բարձր
առաքինութեան օրինակները։
Մնացող ընկերներուն կողմէն երթաք
բարեաւի գեղեցիկ խօսքեր ուղղեց աւար-
տողներուն՝ Մանուկ Էթմէքճեան՝ իտալե-
րէն լեզուով։
Ապա, վարժարանին Ուսումնապետը՝ Հ.
Հմայեակ Կէտիկեան, ամփոփ շրջանակի
մը մէջ պատկերացուց տարեկան ուսում-
նական և կրթական կեանքի պատկերը իր
ցայտուն գծերով։ Իր խօսքն ուղղելով շըր-
ջանաւարտներուն՝ յայտնեց անոնց Տես-
չութեան ջերմ մաղթանքները՝ յաջող և
երջանիկ ապագայի մը համար, և յիշե-



ցուց իրենց բարձր կոչումը Հայ հասա-
րակական կեանքին մէջ, ուր պիտի մըտ-
նէին այլեւս ոչ լոկ անհատներ, այլ իբրեւ
Մխիթարեան աշակերտներ, կատարելու այն
մեծ դերը՝ որուն կ՚ակնկալէ զիրենք կըր-
թող Վարժարանը և ամբողջ Հայ ազգը։
Ուսումնապետ Հայրը ծափահարութեանց
մէջ թուեց մի առ մի եօթը շրջանաւարտ
պսակաւորներու անունները՝ որոնք խո-
րին հրճուանքով և գոհունակութեամբ
ընդունեցան հեղինակաւոր անձնաւորու-
թիւններու և կամ իրենց ծնողաց ձեռքէն՝
իրենց լիկէոնական վկայականները. առա
խմբանկարին ներքեւ անոնց անունները.
Վկայականներու բաշխումէն յետոյ՝
Ուսումնապետ հայրը շնորհակալութիւն
յայտնեց անոնց որ հաճած էին ազնիւ
մտածութեամբ գեղեցիկ նուէրներ շնորհել
յառաջադէմ աշակերտներուն՝ այսպէս քա-
ջալերելով մեր կրթական գործը և վար-
ձատրելով սաներու ջանքերը։ Բացի Մխի-
թարեան Ուխտիս նուէրներէն, գրենական



ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՆՈՐ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ ՄՈՒՐԱՏ–ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ա. կարգ, ձախէն աջ.
Հ. ՀՄԱՅԵԱԿ ԿԷՏԻԿԵԱՆ, Ուսումնապետ. — Հ. ԳԱՐԵԳԻՆ Վ. ՂԱԶԱՐԵԱՆ, Տեսուչ. — Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ, Մատակարար

Բ. կարգ. ձախէն աջ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՏԱՄԱՏԵԱՆ ԽԱՉԻԿ | ծնեալ | ի | Քութահիա | 1919 | մուտք | ի վրժ. | 1932 |
| ՊԱՆՉԷՃԵԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ | » | » | Տարսոն | 1918 | » | » | 1933 |
| ՊՈՏԻԿԵԱՆ ՅԱԿՈԲ | » | » | Տուրացցոյ | 1919 | » | » | 1931 |
| ԳԱԼՖԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ | » | » | Օտեսսա | 1916 | » | » | 1933 |
| ՍՈՂՈՅԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ | » | » | Պարուէնքովլոյ | 1918 | » | » | 1930 |
| ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՎԻԿՏՈՐ | » | » | Թիֆլիս | 1919 | » | » | 1931 |
| ՄԻՀՐԱՆԵԱՆ ՔԱՈՒԼՈՑ | » | » | Գահիրէ | 1916 | » | » | 1933 |

digitised by A.R.A.R.@